նման, դէպի ո՛ր կողմը եւ դառնում էր, իր առջեւից ցած էր գլորում թուրքի երեխաներին: Նրա օրինակը մեզ սիրտ եւ խրախոյս տոեց: Ասլանը, ասլանի ձագի նման, իր զօրեղ ճանկերով բռնում էր նրանց, եւ ձեռքը կոկորդներին դնելով, կիսախեղդ էր անում: Փոքրիկ Սագօն իմ աչքում աւելի աճել եւ աւելի մեծացած էր երեւում: Նա դեւի նման կռւում էր իր մարմնի բոլոր անդամներով. ձեռքով մուշտի էր խփում, ոտքով քացի էր տալիս, գլխով նաղդայ էր գալիս, ատամներով կծում էր, եղունգներով ճանկռում էր: Ոչ սակաւ քաջութեամբ հանդիսացան եւ մեր միւս ընկերները, որոնց ճարպկութիւնները մի առ մի նկարագրելը շատ երկար կը լինէր: Միայն այսքանը կասեմ, որ բոլորից թոյլը, բոլորից անվարժը կռոի մէջ էի ես... Ես այս րոպէիս էլ առանց ծիծաղի չեմ կարող գրել այս տողերը, թէ ինչո՛վ էի օգնում ընկերներիս. – ես միայն գետնից ափերով հող էի վեր առնում, ցրում էի թուրք երեխաների երեսի վրայ, որ նրանց աչքերը լցնեմ հողով, որ նրանց կուրացնեմ, որ ոչինչ չտեսնեն, եւ այսպիսով հեշտացնեմ ընկերներիս ջարդել նրանց:

Չնայելով, որ մահմեդական երեխաները մեզանից կրկնապատիկ թոով աւելի էին, այսոամենայնիւ, նրանք խոյս տոեցին կռոի դաշտից եւ սկսեցին հեռոից մեզ վրայ քարեր արձակել:

— Դուք էլ քարերով... — ձայն տոեց Կարօն:

Մենք կատարեցինք նրա հրամանը: Այդ միջոցին վրայ հասան մի քանի չափահաս մահմեդական պատանիներ, եւ մենք ստիպուած էինք փախչել:

Մեր ընկերներից մի քանիսը վնասոեցան. մի տղայ թեւքի վրայ դանակի վերք ստացաւ, մի ուրիշի ատամները ջարդոեցան քարի հարոածքից, իսկ իմ գլխի փոքրիկ սպին, որի նշանը մնացել է մինչեւ այսօր, այն օրոանից ստացուած է:

Վերադառնալով տուն, մայրս սաստիկ բարկացաւ, երբ լսեց մեր «յիմարութիւնը»: Նա պատրաստւում էր ինձ ծեծել, որ խրատոեմ, որ թուրք երեխաների հետ գործ չունենամ, բայց գլխիցս հոսող արիւնը մի փոքր մեղմացրեց նրա բարկութիւնը: Նա չէր մեղադրում նրանց, որ իմ գլուխը պատառել էին, այլ մեղադրում էր ինձ թէ ինչո՞ւ ես մասնակցեցի կռոի մէջ: Այդ պատճառով կսեց սաստիկ անիծել ինձ.

«Գետինը մտնես... գրողը տանէ քեզ... չար սատանա... պատանդ կարեմ... անիծուած... նաշդ տեսնեմ»... եւ այլ այսպիսի խօսքեր:

Միւս օրը ես դպրոց գնալ չկարողացայ, որովհետեւ մի ամբողջ շաբաթ տանը հիւանդ պառկած էի: Այդ հիւանդութիւնը ազատեց ինձ մեր վարժապետի պատժից: Ինձ պատմեցին, թէ բոլոր աշակերտները, որոնք մասնակ-